

ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

- Դիմում-հայտ Վարկային կազմակերպության գործադիր տնօրենի անունով:
- Հաճախորդի անձնագրի և սոցիալական ապահովության քարտի բնօրինակները և պատճենները:
- Հաճախորդի հետ բնակվող /խնամակալության տակ գտնվող անձանց անձնագրերի պատճենները:
- Տեղեկանք բնակության վայրից (3-րդ ծև):
- Հայտարարություն ընտանիքի կազմի վերաբերյալ:
- Ամուսնացած լինելու դեպքում ՋԱԳՍ-ի վկայականի պատճեն, այն դեպքերում երբ հաճախորդը ամուսնալուծված և/կամ ամուրի (ամուսինը մահացած է) ապա համապատասխանաբար ամուսնալուծության և մահվան վկայականի պատճեն:
- Տեղեկատվություն (պետ. ռեգիստրից, դեպոզիտարիայից, ռեստորավարից) իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում 10% և ավելի մասնակցության վերաբերյալ:
- Բանկերում ցպահանջ և ժամկետային ավանդային հաշիվների առկայության դեպքում, տեղեկանք վերջին ամսվա շարժի և մնացորդի վերաբերյալ:
- Տեղեկատվություն ստացված փոխառությունների վերաբերյալ:
- Տեղեկանք աշխատավայրից, որտեղ պետք է նշվի զբաղեցրած պաշտոնը և ամսեկան աշխատավարձի չափը և/կամ հայտարարություն եկամուտների վերաբերյալ (երբ հաճախորդը և/կամ երաշխավորը չեն աշխատում):
- Ձեռք բերվող անշարժ գույքի ծագումն ու դրա նկատմամբ սեփականության, ինչպես նաև այլ իրավունքներ հաստատող փաստաթղթեր (այն դեպքում երբ արդեն ընտրված է ձեռք բերվող բնակարանը):

Վարկային կազմակերպության դրական որոշման դեպքում.

- վաճառողի (ամուսնու՝ առկայության դեպքում) անձնագրի և սոցիալական ապահովության քարտի, ՋԱԳՍ-ի վկայականի պատճեն,
- տեղեկանք վաճառվող անշարժ գույքի հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ (ծև 3-րդ) և նրանց անձնագրի, ծննդյան վկայականի պատճեններ,
- միասնական տեղեկանք տարածքային անշարժ գույքի կադաստրից սահմանափակումների վերաբերյալ
- Այն դեպքերում երբ որպես երաշխավոր և/կամ վաճառող հանդես է գալիս իրավաբանական անձը, ապա իրավաբանական անձին վերաբերվող փաստաթղթերը՝ հիմնադիր փաստաթուղթը (կանոնադրություն)՝ հետագա բոլոր փոփոխություններով և լրացումներով հանդերձ, Պետական ռեգիստրի գրանցման վկայական (իր Ներդիրներով, ներառյալ ընկերության տնօրենի վերաբերյալ տեղեկության ներդիրը):
- ՀՀ ԿԲ վարկային ռեգիստրի կամ համագործակցող վարկային բյուրոյի կողմից տրամադրվող ելքային տեղեկատվություն:
- Այլ լրացուցիչ փաստաթղթեր, որոնց անհրաժեշտությունը որոշում է Վարկային կազմակերպությունը:

